ՑԱՆԿ *

ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ 1862 ՏԱՐԻՈՅՆ

Ազգային Հեղինակաց.

Ագաբանգեղոս. Երկրորդ տպագրութիւն. — Ի Ս. Ղազար (Վենետիկ).

Ազգային պատմութիւն, մինչև ց'1860. — Հեղինակ. Պ. Ստեփան Պօղոս փափազեան. — Ի Պոլիս. տպ. Բ. Միւհէնտիսեան:

Այսբուանկա. Կատակերգութիւն 'ի հինգ արարուածս. — Հեղ. Տ. Խորէն Գալֆա. — Ի Թէոդոսիա. ի տպ. Խալիպեան:

Առաջնորդ դատիարակութեան առանձինն Ծնողաց համար. Հեղ. Հ. Պօղոս Վ. Յովնանեանց. — Ի Վեննա. տպ. Պաշտպան Ս. Աստուածածնի:

Աստուածաբանութիւն Տեսական. — Ա. Հատոր. Հեղ. Գ. Եդուարդ Հիւրմիզեան Արքեպիսկոպոս Շիրակայ. — 'Ի Ս. Ղազար:

Արհեստ քաղցրաւեանի շինելոյ. Ա. հատոր. — Հեղ. Յովհաննէս Ամիրաեան Մամիկոնեան. — Ի Տփխիս:

Արշալոյս. Օրագիր. ԻԳ (23երորդ) տարի. — Ի Զմիւռնիա:

Բազմավէպ Օրագիր. Ի (20երորդ) տարի. — Ի Ս. Ղազար:

Բարիզ Օրագիր. Գ. տարի. — Ի Բարիզ. տպ. Գարիոնի (H. Carion):

* Եթէ այս ցանկէս դուրս մնացած կայ Հայ հեղինակ կամ գիրք մը՝ անցեալ տարի (1862) տպագրութեամբ հրատարակուած ուր և է տեղ, ինչպէս կը տարակուսինք, չգիտութեամբ է և ոչ դիտմամբ. միայն կամաւ թողուած են կարՀ յայտարարութիւններ, որոց ոչ թիւն և ոչ չափը գիտենք: Այս գրեանց մէկ քանիին տպագրութեան քաղաքն այլ որոշ չգիտելով զանոնք յիշող լրագրին անունը և թիւը դրինք անոնց քով փակագծի մէջ: Փափագելի էր որ լրագրողք միշտ որոշակի և անփոփոխ ծանուցանէին թէ դրոց Ճակատն՝ այսինքն անուանքն, և թէ անոնց հրատարակութեան տեղն և տարւոյն թուականն:

Բարոյականք Պլուտարքեայ. — Թարգմանեալ 'ի գաղղիերենէ արդեամբ Հայկազեան ընկերութեան: (Մէճմուա. 377)

Բացատրութիւն 'ի վերայ սուրբ Հաղորդութեան և պատարագի. — Պոլիս. տպ. Բ. Միւհէնտիսեան:

Գարուն Հայաստանի. Օրագիր. — Ի Զմիւռնիա:

Գուլիէլմոս Թէլ կամ ազատումն Զուիցերացւոց. — Վիպասանութիւն Ֆլորիանու գաղղիացւոյ. — Թարգմանեաց Մ. Ճանըմեան. — Ի Պոլիս. տպ. Քիւրքճեան:

Գուշակ ապագայից. Զուարճալի զբօսանք. — Թարգմանեաց 'ի գաղղիերէնէ. Մ. Շապեան (Մասիս 537):

Դասարան Հայկազն մանկանց. — Հեղ. Ճանիկ Արամեան. — Ի Բարիզ:

Դիմակ. Օրագիր. Ա. տարի. — Ի Զմիւռնիա. տպ. Տէտէեան:

Եղբայրասէր. Օրագիր. Ա. տարի. — Ի Կալկաթա:

Երգք Հայաստանեայց եկեղեցւոյ յերիւրեալք ըստ կանոնաց նորոյ երաժշտութեան. — Ի Ս. Ղազար:

Երեսուն հարիւրեք տարու միջոց կամ Ազգիս վիճակին վրայ ընդհանուր տեսութիւն մը. — Պոլիս. տպ. Բ. Միւհէնտիսեան:

Երեւակ. Օրագիր. ԺԱ. տարի. — Հեղինակ և տպ. Պ. Յովհ. Տ. Կարապետեան Տէրոյենց:

Եւրոպա. Օրագիր. ԺԶ (16երորդ) տարի. — Ի Վեննա տպ. Պաշտպան Ս. Աստուածածնի:

Զեփիւռ Հայրենեաց. Հանդէս հնգետասանօրեայ. Ա. տարի. — Ի Պոլիս:

Էլիզա. Վերջին արևելեան պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրական դէպք մը. — Բ հատոր. — Ի Զմիւռնիա. տպ. Տէտէեան:

Ընթերցարան, աշխարհաբառ. զուարճալի պատմութիւններ, առակներ, և այլն. — 'ի Թէոդոսիա. տպ. Խալիպեան։

Թանգարան ազգային երգոց. — տըպեալ Գ. Ընկերութեան տնօրէնութեամբ (Մասիս 542)։

Թռչնիկ. Օրագիր. Բ տարի. — ի Պոլիս։

Լուքրեցիա Պորձիա. Ողբերգութիւն. — Թարգմանեաց ի գաղղիերէնէ Պ. Տիգրան Յարութիւն Տէտէեան. (Մասիս 542)։

Ծաղիկ, Օրագիր. Բ տարի. — ի Զմիւռնիա. տպ. Տէտէեան։

Կարևոր խորհրդածութիւնք. աշխարհաբառ. — ի Բարիզ. տպ. Արամեան։

Կիրառ. Օրագիր. Ա. տարի. — ի Պոլիս։

Կռունկ Հայոց աշխարհին. Օրագիր. Գ տարի. — ի Տփխիս։

Կ.Պոլիս Հայոց Դուռ կորստեան և դուռ կենաց բացեալ. — Հեղ. Գալուստ Վ. Լճեցի. — ի Պոլիս, յԱրևելեան տպարանի։

Համբաւաբեր Ռուսիոյ. լրագիր. Բ տարի. — ի Մոսքուա. տպ. Լազարեան։

Հայ գրականութեան զարգացման համար կարևոր դիտողութիւն մը. — Հեղ. Պ. Անդրանիկ Յովհաննիսեան. — ի Պոլիս. տպ. Յ. Միւհէնտիսեան։

Հայելի աստուածային շնորհաց. — Հեղ. Սրբազան Տէր Մատթէոս կաթուղիկոս Հայոց. — ի Մոսքուա. տպ. Լազարեան։

Հաւատով Խոստովանիմ յ33 լեզուս. ութերորդ տիպ. — ի Ս. Ղազար։

Հիւսիսափայլ. Օրագիր. ի Մոսքուա?

Հիքեայէյի Աշրք—Քէրէմ, Թիւրքիէր իլէ. (Մէճմուա 454)։

Ճռաքաղ. օրագիր. Դ տարի. — ի Մոսքուա. տպ. Լազարեան։ (դադարեալ յընթացս տարւոյս)։

Մահ Աբելի. երրորդ տիպ. — ի Ս. Ղազար։

Մայրախրատ պատմութիւն, Պոլսի գաղղիացւոյ. — Թարգմանեաց, Ե. Մ. — ի Թէոդոսիա. տպ. Խալիպեան։

Մասեաց Աղաւնի կամ Ծիածան. Օրագիր. Է տարի. — ի Թէոդոսիա. տպ. Խալիպեան։

Մասիս. լրագիր. ԺԲ տարի. — ի Պոլիս. տպ. նոյն լրագրին։

Մեղու. Օրագիր. Զ տարի. — ի Պոլիս։

Մէնմուայը Հավատիս. լրագիր. Ժ տարի. — ի Պոլիս տպ. Յ. Միւհէնտիսեան։

Մուխտասար ժէոդրաֆիա. (Համառօտ Աշխարհագրութիւն). — ի Պոլիս. տպ. Մինասեան։

Յանգարան կամ Բառգիրք յանգաց. — Տ. Խորէն Գալֆա. — ի Թէոդոսիա. տպ. Խալիպեան։

Յաւերժահարսն. օրագիր. Ա տարի. — ի Զմիւռնիա. (դադարեալ յընթացս տարւոյս)։

Յիշատակ Հայաստանի. Souvenir d'Arménie. Mélodie pour Piano seul. — Հեղ. Յակոբ Թումասեան, աշակերտ Մուրատեան վարժարանի. — Բարիզ. տպ. Girod.

Յորդայ գիրք. — Տաղաչափեալ և լուսաբանեալ ի Գ. Եդուարդայ Վ. Հիւրմիւզ արքեպիսկոպոսէ. — ի Ս. Ղազար։

Նախագիտելիք մանկանց. — Թարգմանեաց 'ի գաղղիերէնէ Նշան Զօհրապեան. (Մէճմուա 448)։

Նախագիտելիք մանկանց. — Հեղ. Ստեփան Մոզեան. (Մէճմուա 449)։

Նեկտարիանէ կոյս նահատակ. Ողբերգութիւն. — Հեղ. Համբարձում Սիմէոն Ալաճաճեան, դասատու հայկա-

բանութեան. — Ի Պոլիս. տպ. Միւհէնտիսեան։

Նկարագիր աղետից Երուշաղեմի. — Պոլիս տպ. Միւհէնտիսեան։

Նուէր մանկանց, ողջոյնք շնորհաւորութեան նոր տարւոյ և տօնախմբութեան (վասն 1863 ամի). — Հեղ. Պ. Ներսէս Ս. Մէղպուրեան. (Մասիս թիւ 566)։

Ոսկեբերան հայրապետի հարազատ ձառք, թուով եօթանասուն և երեք, ընտիր թարգմանութիւն նախնեաց. — Ի Ս. Ղազար։

— Նորին սրբոյ Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի. հատոր Ա. — Ի Ս. Ղազար։

Ուսումն ազգային դաստիարակութեան. որ է ազգային տղոց կամքը ու սիրտը կրթելու գիտութիւն առանձին դաստիարակաց համար. Հեղ. Հ. Պօղոս Վ. Յովհաննեանց. — Ի Վենետիկ. տպ. Պաշտպան Ս. Աստուածածնի։

Ուսումնասէր, ուսումնատեաց. Զորս օրիորդք. թատերական խաղ. — Հեղ. Ներսէս Ս. Մէղպուրեան. — Ի Պոլիս. տպ. Քիւրքճեան։

Պատմութիւն Անգղիոյ Լամէ–Ֆլէօրեայ, ի պէտս ազգային դպրոցաց, յաշխարհիկ բարբառ. — Ի Ս. Ղազար։

Պատմութիւն Լուսիանեանց կիլիկիոյ հայկական աղբիւրներէ քաղած. — Հեղ. Վիկտոր Լանկլուա. — (Բարիզ.)

Պատմութիւն Հին ազգաց. Ա հատոր. — Հեղ. Հ. Նիկողայոս Ալգէրեան. — Ի Վենետիկ. տպ. Պաշտպան Ս. Աստուածածնի։

Պատմութիւն նախնեացն վաճառականութեան և ճանապարհ հարստութեան. — Թարգմանեաց Յովհաննէս Յովակիմեան. (Մէճմուա 372)։

Ս. Սանդուխտ. Ողբերգութիւն'ի հինգ արարուածս. — Հեղ. Թովմաս Թէրզեան. — Ի Պոլիս. տպ. Թադէոսի Տիվիտճեան. Ֆէնէր։

Սկզբունք դաստիարակութեան, հատոր Բ. — Թարգմանեաց յիտալերենէ Խաչատուր Բ. Իւթիւճեան. — Ի Պոլիս. տպ. Յ. Մինասեան։

Սոփերք հայկականք. հատորիկ ԻԱ. Աղօթք Բենիկ վարդապետի — ԻԲ. Պատմութիւն Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին. — Վարք Ս. Իլարիոնի. — Վկայութիւն Ս. Իգնատիոսի Անտիոքայ հայրապետին. — Ի Ս. Ղազար։

Ստամպօլտա էն զիատէ սէֆիլ պիր միլլէթ. — Ի Պոլիս. (Մէճմուա 372)։

Վարդան պատմիչ, լուսաբանեալ. — Ի Ս. Ղազար։

Վարդան (Ս.). Ողբերգութիւն. — Հեղ. Պ. Տիգրան Ամիրճանեան. — Ի Վարագ.

Վարդենի. Varténi. Caprice pour le Piano. — Հեղ. Յակոբ Թոմասեան, աշակերտ Մուրատեան վարժարանի. — Ի Բարիզ. տպ. Girod։

Տրդատ (Ս.). ողբերգութիւն. — Հեղ. Պ. Տիգրան Ամիրճանեան։

Փեդրա. Ողբերգութիւն. Յ. Ռասինի. — Թարգմանեալ 'ի չափս հայկականս Ի Գ. Եղուարդայ Վ. Հիւրմիւզ արքեպիսկոպոսէ. — Ի Ս. Ղազար։

Փօփ նամ Ֆէյլէսօֆուն Թէֆթիշի–ատէմ. — Ի Ս. Ղազար։

Քերականութիւն հայերէն. Հայկազեան ընկերութեան. Երկրորդ տիպ. (Մէճմուա 445)։

Քերականութիւն հայերէն. — Հեղ. Պ. Մ. Վ. Գարագաշեան. — Ի Պոլիս, Յարևելեան տպար. Տպագրեալ Պէշիկթաշու Հայկազեան ընկերութեան ծախիւք։

Քնար Հայկական. — (Երգտետր 15 օրեայ). Բ տարի. — Պոլիս. վիմագր. Քայոլ։

Օրացոյց և գուշակ օդոց 1863 թուականին Քրիստոսի, և Հայոց ՌՃԺԲ. — ՃԻ (107երորդ) տարի. — Ի Ս. Ղազար։

Օրացոյց և գուշակութիւնք օդոց 1863 և այլն. — Ի Տ. Երեմիայ քահանայէ Խասգիւղի. — Ի Պոլիս. տպ. Ց. Միւհէնտիսեան։

Օրացոյց պատկերազարդ և գուշակութիւնք օդոց 1863. — Նորին հեղինակի. — Ի Պոլիս. տպ. Ռ. Ց. Քիւրքճեան։

Օրացոյց Համազգային 1863 տարւոյն. — Պոլիս. տպ. Ա. Թահմիզճեան։

ԱՐԵՆԱԿԻՑ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ

Թէպէտ շատ փորձերով ապացուցուած է որ արենակից ամուսնութիւնք պատճառ են բազմատեսակ խօթութեանց և մասնաւորապէս խլահամերց. բայց որպէս զի ցուցընենք թէ սխալ է ոմանց այն կարծիքն, որք Ժառանգական կը համարին այդ տկարութիւնը, առնունք դէպք մը որ Գաղղիոյ մէջ հանդիպած ու գիտնոց շատոնց ծանօթ եղած է, յորում ծնողք կարծուածէն աւելի զօրաւոր ու կատարեալ կազմուածոյ ենթակայ էին։

Հետևեալ դիտողութիւնս եղած է 'ի Պրզանսոն Պ. Բերրն բժշկապետին խնամքը, որ այսպէս կը գրէ.

« Երկու եղբարքն Վալէ, լեռնաբնակք. բարձրահասակ, զօրաւոր կազմուածք ունեցող՝ և մինչև ցայսօր կատարեալ առողջութեամբ ապրած էին։ Ամուսնացան երկուքն ալ իրենց հօրեղբօր դստերացն հետ։

« Անդրանիկը դեռ լեռնաբնակ է, և շատ որդւոց տէր, որոնցմէ անդրանիկը միայն, այժմ քսանամեայ, է խուլ և համր։

« Միւս եղբայրը՝ որ վեց տարի է շոգեկառաց ծառայութեան մէջ է, ինչուան հիմա վեց զաւակ ունեցաւ. որք ներկայապէս են,

« Ա. Դուստր երկոտասանամեայ, փափկանուագ, փոքրամարմին, կարգէ դուրս երկչոտ. աղէկ կը լսէ և աղէկ կը խօսի։

« Բ. Դուստր տասնամեայ. ուժեղ, բարձրահասակ. խուլ և համր. այժմ կը գտնուի Պրզանսոնի խլահամերց բարեգործական տունը։

« Գ. Մանուկ վաղամեռիկ. աղէկ կը լսէր և աղէկ կը խօսէր։

« Դ. Ուսար եօթնամեայ, մարմնեղ, բարձր և ուժեղ. խուլ և համր։

« Ե. Դուստր քառամեայ. փոքրամարմին. խօսակցութիւնը անկատար, բայց լաւ կը լսէ։

« Զ. Մանուկ եռամեայ. անզգայ կը թուի ո՛և իցէ ձայնի ազդեցութեանն. սակայն դեռ չգիտցուիր թէ արդեօք ասիկա ալ մէկալ դժբաղդ եղբարցը կարգը պիտի անցնի թէ չէ։

« Ուրեմն այս դիտողութիւնս ապացոյց մը կը բնայ ըլլալ արենակից ամուսնութենէ դժբաղդ ծնած տղոց, և ոչ թէ ժառանգական ախտէ մը ինչպէս կը համարին ոմանք »։

Անցեալ Նոյեմբերի 23ին Գաղղիոյ Պէռի Սէն-Քրիսդոֆի աւանէն չորս որսորդք աղուէս մը տեսնելով՝ եռեւէն ընկան ինչուան Պէռնի-Ռիվիէրի մէկ քարահատքը. ներս մտան, աղուէսը չգտան հոն. բայց մէջերնէն երկուքը մեծ զարմացմամբ գտան սուտ գրամ կարողի գործարան մը. ուր կային կաղապարներ, կապար, կանթեղ մը և սուտ ստակներ, որ շատ հին կ'երևային։ Մէկէն տեղւոյն ոստիկանութեանը իմաց տրուեցաւ որսորդներէն, և երկու զինակիրք եկան քննելու։

Անհաւատալի նենգութեամբ նապաստակ մը՝ տասուերկու շներու խումբ մը կը փճացընէ։ Շատ անգամ նապաստակը իր թշնամիներուն հալածմունքներէն ազատեր էր. բայց միշտ վտանգի մէջ անդադար յարձակմունքներէ՝ այնպիսի անհանգստութեամբ օրերը կ'անցընէր, որ մարսողութիւնը տակնուվրայ ըլլալով, քունը աչուրներէն կորելով, առողջութիւնը զգալի կերպով կը պակսէր։ Վերջապէս յետին փորձ մ'ալ կը փորձէ. ինչուան այն տեղն սրունքներուն վրայ էր իր ազատութեան ճարը, բայց այս ապաւէնն ալ կրնար տակրանալ։ Սեպտեալ քարահատք մը կը ճանչնար, որ անդունդ մ'էր. իր մեքենայած վրէժխնդրութեանը յարմար սեպեց այն տեղը։ Երբ նորէն հալածուեցաւ իր որջէն, հակառակորդներուն մելեգին թափը կոտրելու համար քանի մը շրջանը նեղէն վերջը, յանկարծ գահաւանդին վրայ ցատքեց. երբ եղերքը հասաւ ճամբան փոխեց, և ապահով ծակ մը մտաւ։ Շունները անկասկած եռեւէն վազելով մէկիկ մէկիկ վէրի մէջ թափեցան։ Քարահատքին խորը աշխատող բանուորները՝ զարմանալով տեսան շներու կարկուտ մը ոտուրնուն կամ գլխընուն վրայ. շներէն ոմանք քիչ ատենէն մեռան, ոմանք ծանր կամ թեթև ինքասուած՝ թէպէտ դարմանուեցան, բայց բոլորովին չողջընցան. իսկ նապաստակն աղէկ վիճակի մէջ է, և քանի մը շաբաթ ալ դեռ կրնայ պառկիլ երկու երեսին վրայ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ